


ՀԻՆ ՀԱՒԱՏՔ ՀԱՅՈՑ



ԳԼ. ԺԲ. - ՀԱՆԴԵՐՑՅԵԱԼ ԿԵԱՆՔ

(Տես յէջ 337)

Ա. Բ. և բարի Ոգուց յիշատակը (Գլ. ԺԲ.) ինքնին իմացուցին մեր հեթանոս նախնարաց հաւատալը Հանգերձեալ կենաց. և ո՞վ տարակուսած կամ չէ ընդունած զայս՝ բովանդակ ազգաց մէջ, բայց եթէ քանի մի լիբր իմաստակը, որք անաստուածութիւնն այլ պարծանք համարին, եթէ խելագար չեն: Որքան այլ ընդհանուր է հանգերձեալ կենաց հաւատքն, այնքան միօրինակ չէ, մանաւանդ թէ շատ զանազանեալ է հոգւոց վիճակի կամ գործոց հատուցման, և արքայութեան ու գոռիւց գազափարն. և ըստ այսմ՝ շատ փափագելի էր գիտնալ մերայոց կարծիքն, որոյ վրայ որոշ աւանդութիւն հասած չէ մեզ, այլ նշմարք ինչ. աւելի երկուց կենաց կապին կամ. կամբոյրին և անոր երկրաւոր յիշատակարանին, այսինքն մահուան,

յուզարկաւորութեան և գերեզմանի: — Գրուոյն և Առնակն յայտնեցին որ ըստ սահմանեալ ժամանակի Ճակատագրին, ամեն մարդու կու զայ հոգեպահանջ կամ հոգեկոչ Հրեշտակն կամ Գիւն՝ հանել զհոգին ի մարմնոյն. հրեշտակին կոչումն արդարոց՝ կու վայլէր որ մեղմ բլլար և ըսուէր Հրաւեր: Այս բացատրութիւնս նաև ի քրիստոնէութեան՝ ինչուան հիմայ ի գործ ածուի մեր լեզուի մէջ, զուցէ աւելի քան առ օտարս. իսկ հասարակաց համար՝ ճակատագրին վրճիւն՝ Հրաման էր, ինչպէս գուշակուի Եզնրէլայ վարդապետութենէն. որովք « Հրաւեր » մանացն եւս հարցուածք... լուծանին: — » Զինչ Հրամանքն իցեն, և ուսով բան » Հրամանացն ընդ աշխարհ տարածեալ ի » ցէ: — Հրաման վասն մահուան՝ յաստուածատուր գիրս ոչ ուրեք գտանեմք: —

» Ո՛ր իցէ այն զոր ասեն, եթէ որ ինչ ի
 » ճակատադրին գրեալ է Հրամանացն՝ այնմ
 » չէ հնար վրիպել... և ուր Հրամանքն իցեն
 » և յուսէ Հրամանքն՝ ըստ այնմ և մեռաւ...
 » նին, և վրիպել չէ հնար ի սահմանելոյ
 » Հրամանէն » : — Նոյնպէս և Բ՛հ. կաթողի-
 կոսն Մանդակունի. « Մի՛ մոլորեցուք իբրեւ
 » զհեթանոսն՝ ի Բախտ և ճակատագիր և
 » ի Հրամանս. զի զինչ և Հրամանքդ տա-
 » ռածին ընդ ամենայն երկիր և բանգադու-
 » շեալ խօսին սուտ, եթէ մարդ ընդ Հրա-
 » մանս վարի և գործէ », և այլն : — Բայց
 ինչպէս Հրաւերի համար ըսինք՝ Հրամանքն
 այլ գործածուած են ի քրիստոնէական գրուածս.
 ինչպէս նորագիտ տապանադիր Արտաւազդայ
 երամարականի ի կողմանս Բասենոյ. « Աս-
 » տուծոյ Հրամանաւք աստուածակոյ հրա-
 » ժարմամբ՝ աստ է հանդուցեալ » և այլն :
 Հրաժարումն այլ լծորդ տալիններուն (Հրա-
 վերի և Հրամանի) ոչ օտար թուի և ի հե-
 թանոս Հայոց, գոցէ և ոչ յիմաստէ Յա-
 րուհէրի :

Մեռելոց պատանաց և յուզարկաւորու-
 թեան ծխից կարգին այլ շատ ծանօթ չենք.
 բայց չեն կարծուիր շատ տարբեր ի համա-
 կրօն և ի մերձաւոր ազգաց, մասնաւոր եթէ
 պիտենք քանի մի յիշատակուած նշմարք. ինչ-
 պէս լայական կանայքն, որք Եղեռամարդ կ'ը-
 սուին (ողբացող մարք) և արտասուաշարժ ձայն-
 արկու և երգեցիկ գոչանք, հանդերձ չափա-
 զանց և հեթանոսաց յատուկ սգոյ և ցաւոյ ձե-
 ւացեալ նշանօք, մագերու փետտելով, երես-
 նին և թեւերնին կծելով և խածնելով՝ մինչև
 արիւն կաթեցընել. սովորութիւնք՝ որք սպր-
 դած են նա և յանդգատ քրիստոնեայս, և ո-
 րոց զէմ՝ շատ հեղ գրած են Հարց մեր և
 կանոնօք զատապարտած ⁽¹⁾ : Աւելի պզգալի
 չափազանցութիւն էր կամաւոր և՛ ակամայ
 մահ և սպանութիւն՝ սիրելեաց, կանանց,
 հարճից, ծառայից՝ թաղաւորաց և մեծամե-
 ծաց, (թող անոնց հեծած ձիերն և շուներն).

ինչպէս յիշուի Բ Արտաշիսի համար. որոց
 թերեւս խեղճ և իրաւ ողբերը չսեւլու հա-
 մար՝ երաժշտաց ձայները զօրացընէին : Այդ
 յետին անիրաւ և անօգուտ սովորութենէն
 զատ, ողբառացք և գոչանք և երգք հան-
 դիսականք՝ պահուած էին և ի քրիստոնէու-
 թեան, թագաւորաց և մեծամեծաց համար,
 ինչպէս յատուկ գրուած է (Թուի ի Խորե-
 նացոյ) մեծին Տրդատոյ համար, և Արծ-
 րունի մեծ իշխանաց համար՝ ի Թովմայէ
 Արծրունոյ : — Սըբոյ նշանաց մէջ սեւու-
 թիւնն հասարակ է գրեթէ ամենայն ազգաց,
 բայց սպիտակոտրիւն՝ նշանաւոր է մերազ-
 նեայց մէջ, թէ ոչ ամենու՝ բայց մեծամե-
 ծաց կամ թագաւորաց և քահանայից հա-
 մար. որոց յատուկ էր և սպիտակ հագնիլն.
 մասնաւորապէս աշխարհակալ Տիրահայ Ար-
 շակունւոյ համար՝ իբր աչքի զարնող բան
 մի՛ յիշեն սատր հեղինակը մերձաժամանակը.
 իսկ արքունի և կրօնական հանդիսից մէջ
 այլ՝ ինչուան կառաց ձիերն և զոհելու կեն-
 զանիք սպիտակք պիտի ըլլային, ինչպէս
 Խոսրովու և Տրդատոյ համար պատմէ Ազա-
 թանգը. թուի թէ անոնց արքունական և
 սրբազան աստիճանը զրկել համարուէր սգոյ
 սեւն. անոր համար զազադքն և յուզարկա-
 ւորութեան սպասքն և սպասաւորք՝ սպիտակ
 պիտի ըլլային : Այս սովորութիւնս՝ յարքու-
 նիս Հայոց՝ ինչուան վերջին հարստութեան
 (Ռուբինեանց) մէջ այլ պահուած էր, և ին-
 չուան վերջին թագաւորն այլ (որ ի մօրէ
 միայն Հայ կըրնար ըսուիլ, Ղեւոն Ե) սպի-
 տակ զգեստներով և սպիտակազգեստ յուզար-
 կաւորներով տարուեցաւ թաղուելու (ի Բա-
 րդ) : Նա և Մաշտոցը մեր պատուիրեն վախ-
 ճանեալ քահանայից սպիտակ զգեստ հագ-
 ցընել և սպիտակօք դնել ի դերեզման :

Եւստ տեսակ սովորութիւն եղած է մարդ-
 կան՝ իրենց մեռելոց մարմիններու նկատ-
 մամբ, պահելու կամ փնացընելու համար,
 կամ բնութեան յանձնելու՝ որ ինքնին պահէ
 կամ քակէ իրմէ ձեւացածը. ըստ առաջնոյն՝
 ոմանք (Եգիպտացիք) զեղբրով և զմոտելով
 շանային անփուտ պահել մարմինները, զորն
 մեծ համարեալ մարդկան. ամենուն ծանօթ
 են Մուսկայք. ոմանք այլ՝ (ինչպէս Պար-

1 Քննելի է Յովհ. Գառնեցոյ խրատն. « Մի՛
 տայցես թոյլ առնել ի վերայ մեռելին կօծ և
 Կապոյտ, և կտուրս հերաց և Աճիրոյ » :

սիկը, Հոռոմայեցիք, և այլն) կ'այրէին, և միայն ոսկորներն կամ մոխիրը պահէին. ուստի օւղորութիւն է մեր կրօնական զրոյց մէջ այլ անիւնացեալ մարմինը ըսել. բայց մեր հեթանոս նախնեաց մէջ այլ չի յիշուիր դիականց այրումն, այլ ըստ ընդհանրական և բնականագոյն օրինաց՝ թաղել ի հող, կամ կէս պահպանութեամբ աւանդել ի շիրիմն, ի քարեղէն գերեզմանս, զմեղելով. ինչպէս և ի քրիստոնէութեան կ'ընէին թաղութորաց, իշխանազանց և բարձր աստիճանաւոր եկեղեցականաց. ինչուան հիմայ այլ կ'ընեն այսպէս և օտարք. — Հնազոյնք՝ ի իննց իշխանազուներ կամ մանաւանդ վեհազուներ՝ մարդկան մէջ իրենց բարձր ճանչցւելուն յարմար՝ բարձր տեղերում թաղէին կամ դնէին. Հայկայ համար կ'ըսուի՝ որ Բելլայ դիակն այլ զեղապատեալ ի բարձրաւանդակ տեղ թաղել տուաւ, « ի տեփլ կանանց և որպոց » Եթէ նա կամ աւանդող պատմիչն ուրիշ գիտամբ այլ զայս ըրած է, ինչուան հիմայ այլ գտուին թէ ի մեր թէ օտար երկիրներն՝ լերանց և բլրոց վրայ գերեզմանք. և ոչ միայն անշէն երկրի բարձանց վրայ, այլ և շինուածոց, մանաւանդ լայն պարբայաց վրայ իսկ կանգնէին գերեզմանս. ոսկից օւղորութիւն է ի գիրս մեր՝ նոյն պարբայաց բրգաձեւ և ուրիշ կերպ բարձր մասերն այլ՝ Մահարձան անուանել: Շատ պատմաւորներ կրնան ըլլալ՝ այս կերպ բարձրադիր գերեզմանաց, զուցէ մէկն այլ Աշեղներու իջման գիւրութեան համար ըլլայ: — Սոլորութիւն էր հինբրու՝ նաեւ Հոգարտոր գերեզման շինել, այսինքն կամ ի գետին թաղելով՝ վրան հող և քար կուտելով՝ բլրակ մի ձեւացնել, որ կ'ըսուի եւս թիւ, կամ բնական բլրակաց մէջ փորել և զննել զազաղը կամ գիակը. բայց մերայնեայց մէջ շատ յաճախեալ չեղեւոր այս կերպս. և նոյն իսկ թագաւորք և իշխանազուներ իրենց սեփական Գերեզմանատուն պատրաստէին, ուր՝ կամ առանձին փորուած և քանդակապարզ գերեզմանաց մէջ թաղուէին, կամ ի գետնի՝ քարի կամ վիմի մի տակ, որ ի հարկէ Տապանաքար կուշուելի է. ըստ որում մարմինն անփոփոգ

խորշն՝ կամ որպիսի և է ընդունարանն՝ Տապան կոչուի, իբրեւ անտուկ ինչ, ինչպէս տապանակն այլ նշանակէ: Բայց զուցէ Տապանն՝ սապ ըսուի իմաստն այլ ունեցեր է ի սկզբան, նման Թունաց τάφος, τάφη բառին, որ նշանակէր դիականց այրման տեղը: Բայց եթէ այս չէ՝ աւելի հաւանական երեւի անոնց Τάφος անունն (յորմէ և լատին Tumba, փառնկ Tombe,) անուած Դաւթանն, որ այնքան հասարակօրէն զործածուած է ի մեր լեզուի, մինչեւ մեռելոց վրայ ըսուած ողբն կամ խօսքն՝ դաւթանական բան կոչել, ինչպէս և գերեզմանական: — Յիշեցնիք Պարսից ազանդին մէջ իրենց մեռելատեղի Դաւթանն. այս անունը լսեցրնէ՝ մասամբ և մեր կմայք բառը, որ մեռելոց մտէ զատուած մասն՝ օսկորները, կամ յորցած մարմինը նշանակէ. այսու անուամբ և թագաւորաց գերեզմանատեղոյ քով շէնքն կամ գիւղն կամայա կոչուած է և կոչուի մինչեւ այսօր:

Մարդիկ, մերայնոց համար ըսեմք, զուցէ ի կենդանութեան՝ բնակարանաց այնքան զանազան անուն չեն տուած՝ որքան իրենց մեռելոց տեղոյ և պահարանին. ասոնց աւանդէն հասարակն՝ բայց և ամենէն նշանաւոր՝ շատ անգամ զբաժնիս է, Գերեզման. որ թէ և բառական երկար եռալանի բառ մ'է, բայց զեռ օտաւապէս չէ բացայայտուած, (ի բաց թողլով զծաղրական մեկնութիւն գերեզմանէն, գերադաւան). վնասկան վ. այլ այսպէս ըսած է, բայց աւելցնելով. « Դիր միոյ կամ գերոյ աման », « պարսիկ բառ է. Ներքոյ հողոյ կամ երկրի » ասի իրեզմանն. — հին հեթանոսական զազանիք մի պահել կարծեցրնէ՝ Գուցէ պատահական՝ բայց ոչ հեռի է յիմաստէն՝ յոյն անունն Κηρ կամ Κήρεσ, որ մահաւան պիններ կամ քաջեր նշանակէր. նմանազոյն ձայնիւ՝ այլ հակառակ իմաստիւ՝ հին լատինք գերաւս—մանուս Cerus manus, կոչէին զաբարիչն Աստուած: Մերձաւոր է ձայնիս և ոչ հեռի իմաստիւ զանդիկ նորոսմանն այլ զոր յիշած եմք յառաջ և որ հաւանելի եղած է արեւելագիտաց ոմանց: — Ըստ ձայնի և ըստ իմաստի՝ մերձաւոր է մեր մեղ-

մայուշիկ ֆնարան անունն այլ՝ Յունաց ֆն-
 ևի՛րիոն, Κεντήριον, որ և բարդեալ ընդ
 տափոս՝ կ'ըսուի Κενωτάφος, իբր ֆնատա-
 պան։ Յոյնք սովորաբար այսպիսի գերեզման
 կանգնէին ծովու մէջ մեռելոց, կամ որոց
 մարմինք կորսուած էին. և յարմար էր՝ որ
 քոնէ ի քուն ըլլային. քրիստոնէութիւնն սըր-
 բեր և աշնուացուցեր է այս անունն, մահա-
 ւանդ մեր եկեղեցւոյ լեզուաւ, որ իր հաւա-
 տացեալ մեռեալքը ներեցնայք և Համգոռ-
 ցեալք կոչէ։ — Մէկ անձնաթիւ ծագմամբ
 բառ մ'այլ է մեր Շիրիսն, որ յայտն է մե-
 ծագործ գերեզման, որ բոս մեկնրչի բառից
 փխլոնի՝ Յիշատականց կոչի, և ճիշտ Mo-
 numentum, Monument բռնածն է.
 բայց նոյնն կ'ըսէ եւս, թէ « Շիրիմ՝ կո-
 » չէին նախնիքն՝ զգերեզման մերկացեալ ».
 իսկ Միխիթար Գոշ (ի Մեկն. Երեմիայ),
 « Շիրիմ՝ զայն տաէ՛ ուր զբազում մեռեալն
 գնէին »։ — Յետին բառս կամ բայս՝ յի-
 շեցընէ մեզ և գիտաւ, որով կոչուէին հա-
 ւածորէն և ի հին Հայոց, տեղիք՝ ուր մար-
 մինք մեռելոց դրուին, և քրիստոնէութիւն
 կ'աւելցընէ Դիրք հանգստեան։ — Ուսովա-
 կան՝ բայց աւելի պարզ և զգայուն է Հող-
 վերք կամ Հողվայրք կոչումն գերեզմանաւ,
 տեղեանց, յարմար՝ թէ՛ հասարակ մարդկան
 առանց քարի թաղուող և վրան հողակցտով
 ծածկուողին, և թէ հողեղէն մարդուն՝ ի հող
 դառնալուն։

Հնութիւն և թշնամութիւն ջնջած կամ
 ծածկած են մեր հեթանոս հարց գերեզմաննե-
 րը, (երանք թէ ոչ և հին քրիստոնեայ աւագ
 մարդկան), որով և յեմք գիտեմք ստոյգ ինչ ձեւ
 ինչ նշաններ ունէին, և ինչ բան մարմնոց հետ
 ի մէջն դրուէր. իսկ մնացեալ քրիստոնէից գե-
 րեզմանաց մէջ՝ հեթանոսութենէ մնացեալ ե-
 րեւին խոյակերպ և ճիւղակերպ գերեզմանքն յե-
 տին դարուց, զի հին թուականաւ (նախ քան
 զՊՁ դար) արձանազիրք կարդացուած չեն։
 Գաւաճն՝ նշանակ հեղութեան ֆրիքստութի՝ նախ
 ի Միկուշէն կոչուած գառն Աստուծոյ, Հայոց
 քրիստոնեայ հարց և իշխանաց սիրելի նշա-
 նակ մ'էր և է. բայց այսու մօտք չեն խոյա-
 կերպ գերեզմանքն. ոմանք կարծեն թէ մե-
 ռելոյն հովուական հարստութիւնը նշանակէ,

ինչպէս Ձին այլ հեծելութիւնը. սակայն կան
 շատ խոյաձեւք՝ որոց տակ հանգողքն՝ ոչ
 հովիւ եղած են և ոչ խոյոց և ոչխարաց
 տեր. բայց եթէ նահապետական դարուց ա-
 ւանդութիւն համարել ուղուի այս ձեւաւ՝ յորմէ
 և հոյակապ ձեւն ճարտարպետութեան կամ
 մեծագործ շինուածոց, որ և իս տաաւի գրուի
 խոյակապ։ առանց պատճառի մի ընտրած
 չեն և ճարտարքն Յունաց իրենց սեանց խոյի
 գլուխքն, յորմէ և խոյակ բառ ի մեզ. նա
 եւ անկերպարան սեանց (ինչպէս յոնիական
 ոճոյն) վերին երկու եղջերակերպ գալարեալ
 կողմերը, և այլն։

Ինչ օրէնք, ինչ պաշտօն, ինչ հանդէս
 կատարուէր մեռելոց և գերեզմանաց վրայ. —
 չկան մերոց գրուածք, ինչպէս անին Եգիպ-
 տացիք և ոմանք ի հին ազգաց. հաւանական
 է միայն որ աղօթք ինչ և զոհք կամ Մա-
 տաղք կատարուէին, ոչ միայն ի յուղարկա-
 տրութեան՝ այլ և մեռելոց համար սահմա-
 նեալ յիշատակի կամ տօնական օրերում.
 Տիրաւն Բ Արշակունի թաղաւոր իր սպա-
 նուած եղբոր Մաթան քրմապետի համար
 « Բագին ի վրայ գերեզմանին շինեալ, զի
 » ի զոհիցն՝ ամենայն անցաւորք վայելեացն ».
 և այս թուի թէ ոչ միայն յատուկ հանդի-
 սակին, այլ և հասարակ օրեր, որպէս զի
 ամենայն անցաւոր վայելէ, իբրեւ ձիւ ճա-
 շարան կամ հիւրանոց. Երեւի թէ և կրակ
 ու ջուր այլ զնէին գերեզմանաց քով, ինչ-
 պէս հիմայ այլ ոմանք ի մերայոց՝ գերեզմանի
 քարին վրայ խորշեր փորել տան, իբրեւ ըմ-
 պանակ թռչնոց։ Վարդան Վ. այլ Աբելի
 զոհին « օրինակ է, կ'ըսէ, Հոսր՝ որ ի վերայ
 » գերեզմանի մեռելոյն արկանեն՝ խնկով ».
 Մագիսարոս այլ իր սովորական խրվնաբա-
 նութեամբ գրէ. « Ըստ . . յուղարկաւորութեան
 և արբանեկութեան՝ զինի հոսր ի ձեռին, և
 զդամբանականն քաջահնչող ձայնիւ »։ Քրիս-
 տոնէական է այս հուրս, բայց ֆրիստոսի
 վրաժիշտն առաջ հեթանոսական կայծ մ'այլ
 փայլաբերայ։

Թողովոյ հիմայ մեռելոց արտաքին պա-
 հարանք և անոր քով կամ վրան կատարուա-
 ծը, եթէ մէկ մ'այլ ուզենք նայիլ — ոչ իրենց
 վրայ — այլ զոնէ իրենց յատուկ անուան, նը-

շանաւոր է անոնց մարմնոց Դ-ի, Դիակն կո-
չուիլն, միաժամկ բառ մի, նման և ձայն
նրան, և ոչ շատ հեռի յիմաստէ՝ Դեռ և
Դիք բառից, որոց վրայ գրած եմք. նոյնպէս
և երբեմն գիւցազանց համար բնութան ք գիրս
Դիք դիակութիւն կամ զից դիականց, եթէ՛
արհամարհուիմք համար բնութան չէ (է) :

Անցնելով և գերեզմանէ այնդին՝ զտաղեշտական կամուրջով մի, որոյ ընդունուած ըլլալն ի Հայոց՝ հարկ է, եթէ այդ աղանդն ընդունած են, նոյնպէս այլ ընդունած կ'ըլլան հոգւոյ գատաւտանը, զոր Սերբոշ կ'ընէր կարն և շուս, կամ՝ ըստ զորոց՝ համառօտ։ Այս բառս շատ հաւանական է որ այն հին աղանդէն փոխանցեր է՝ ի հեթանոս հարց Հայոց առ քրիստոնէայ հարս մեր, ինչպէս շատեալ կարգադրութի են յերկէ (Ա) Զհաւա՝ մատառ հատուցմունչն արդար գատաւտաւ, » նին » . կամ (Գ) « Առնել համառօտս յաւ » լիտեմից ի մէջ արդարոց և մեղաւորաց » : Ուրիշ մ'այլ զբաժն է. « Հանդերձեալ է Որդի » Աստուծոյ գալ փառօք և առնել զհամաւ, » թօտն յաշխոհմից » . նոյնպէս և Շարաւկանի երգածն, « Որ ի վերջնումն աւուր » համառօտի » : — Համառօտ գատաւտանն երկար բացատրութիւն այլ չէր կրելար ունենալ. արագ արագ կտրուած վնիւն, կամ յաճ կամ յահակն նայել կու տայ, ի վեր կամ ի վայր. այսինքն ի կայանս արդարօց՝ որ է ըստ մեզ՝ Արքայութիւն, կամ ի կայտ մեղաւորաց որ են Դժոխքս :

Այս դժգոհի անունն դժնդակագոյն իրի՝ անտարակոյս ի հեթմանոսական հաւատոց Հայոց Տեառնալ է, յասն զի և Պարսից ու մոզուց աղանդն այլ նոյն բաւր կ'ըսէ, Տա- ղախ կամ Տիգրէի, عجم - ուրիշ կերպով՝ Ճոռմադիսը այլ կոչուած են առ մեզ, ինչ- պէս նշանակեն հին բառգիրք մեր: Ըստ ա- նուանն հետեւի՝ որ դժոխոց նկարագիրն և դատապարտելոց պատժոյ ժամանակն այլ՝ նոյն զանդիկ և պարսիկ ազանդոյ համեմատ

Ելլայ։ Նոյն հին բառգիրք մեր՝ Տիկառք եւս անուանեն զգոփա, որոյ իմաստն յայտնի է և շատ յարմար, հակառակ ուրախութեան և զուարթութեան, կամ լուսոյ, այսինքն մուլք և խաւար։ Միութեան վրայ յատուկ աւանդութիւն մի չկայ առ մեզ, կամ ինձ անծանօթ է. բայց նշանական կամ զարմանալի է որ մինչ Մուլք բառն յատուկ է մեր ինքուին, օտարաց մէջ (կարծեմ Ասորոց) նոյն բառն Մուլք (Mouth գրեալ յԵւրոպացոց) նշանակէ շատուած մեռելոց։ — Գոփոց ուրիշ անուանքն որ ի գիրս մեր՝ եկամուտ են, Գեհեանն յԵրայայեցոց (Թուրք. *Ճեհեննեմ*), և Տարտարուն ի Յունաց։ Իսկ ոսկինք Սանգարն, յորմէ Սանգարամետք և Սանգարապետք, զորս ի կարգի չար ոգւոց յիշած եմք. անոնց հետ և Շահապետն, որ թէ և այլ և այլ իրաց վրայ ի ըստի, բայց յառնակալն այլ Շահապետ ոգոփոց կոչուի՝ այս անաւոր սեղողն օստիկանն կամ իշխանն։

Ըստ ամենայն ազգաց հեթանոսական ապ-
շութեան՝ աւելի չարեաց և դժոխոց վրայ
զրոյց և հաւատը կայ, քան բարոյն և Ար-
քայոռքեան. սա՛ է Դրախտ բառն որ հիմա
մեզ երկնակութեան կայանքը նշանակին,
քրիստոնէութեան բերք էն. մեր նախնի դի-
ցակրօն հարց արդեօք Պարսից նման Ահու-
րահիսդա կամ Վենէշտէմ՝ անուամբ կոչէին,
չէ յայտ. այլ հաւանական է թէ Անդշ ասլ
կոչէին որ զուշակուի Եզնեղայ ըստծէն.
« Կէսն ի փառս և կէսն յանարգանս և մի
թերին յԱնդշ և միտ թերին ի զոռմս »:
Ի Գրոնիկոնի Եւսեբեայ ասլ կ'ըստի վասն նա-
խահօրն. « ՅԱհուշից և ի բազմերան կե-
նացն տարազիր զտանէր »² :

(Եսրայաթէի)

Ձ ԼԵՐԵ ԲԱՃԱԽԱՊԱԿԱՌՈՒՄ ՀԻՆ ԳՐԵՅ ՄԷՋ ԱՅԷ՝
որ Լուսաւորիչ կ'ընծայուի սովորաբար, ար-
քայութեան վայելքն ստեպ կոշտին Անուշակ
փառք, Անուշակ պարզեւք, և այլն: Ակնարկե-
լով և առ գրային մեր Պարսից աղանդն, ոչ միայն
զգտաւարութիւն ու լաւութիւն միանգամայն կոչէ
հնուէր 𐬀𐬎𐬎𐬎𐬎, այլ և Աստուծոյ ընծայած ա-
նուանց մէկն է Սնուշակ:

1 Կըրնայ դիտուիլ՝ որ դի՛ իբրեւ մարմին մե-
ռելոյ՝ չունի բնական յոգնակի, այլ նոյնանիշ
Դիակն = Դիակունք: